

Ողջունելու կանոնները



Ողջունյալ, փոքրիկ.

Այսօր կգրուցենք այն մասին, թե ինչպես պետք է հանդիպման ժամանակ ողջունել ընկերներին ու բարեկամներին:

Նախ և առաջ հիշեցնեմ, որ առաջինը փոքրերն են ողջունում մեծերին: Չնայած, դաստիարակված մարդը չի սպասում, որպեսզի իրեն ողջունեն, այլ ինքն է առաջինը ողջունում:

Եթե այն մարդը, ում ուզում ես ողջունել, հեռու է քեզից, օրինակ սրահի մյուս անկյունում, ձեռքերդ մի թափահարիր կամ մի բղավիր ամբողջ սրահով մեկ: Փորձիր հանդիպել նրա հայացքին և ժպտալով գլխով անել: Դա բավարար է:

Աղմկոտ ու բուռն գոչյունները, օրինակ՝ «Ես ո՞ւմ եմ տեսնում», «Կերջապե՛ս», «Ո՞ւր էիր կորել»... ողջունյալ չեն:

Եթե նույն մարդը օրվա մեջ մի քանի անգամ է հանդիպում քեզ, ողջունիր նրան ամեն անգամ, բայց տարբեր ձևերով՝ գլխով արա, ժպտա, ձեռքդ թեթև թափահարիր, եթե սկսելու ժամանակ ես հանդիպում, բարի փորժակ մաղթիր և այլն: